ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/21

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Ջիլավյանի,
«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Փարիզյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.01.2021թ.-ի թիվ 26/26/967-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 22/01/2021թ. թիվ 08-53 գրության հիման վրա, 26.01.2021թ.-ին «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 26.01.2021թ.-ին:

27.01.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/21 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

04.02.2021թ.-ին, 19.02.2021թ.-ին և 25.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.02.2021թ.-ին:

2. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 22.01.2021թ.-ին թիվ 08-53 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Մեգիէլ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկությունները.

Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ. <<Նորք-Մարաշ> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն հայտարարել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով նախատեսված է <<ԱԱՇ Օքսիգենատոր մանկական>> ապրանքը, իր համապատասխան տեխնիկական բնութագրերով: Մրցույթի նշված չափաբաժնին մասնակցել է նաև <<Մեգիէլ>> ՍՊԸ-ն, որպես համարժեք ապրանք առաջարկելով հրավերով նախատեսվածից տարբերվող, այլ մոդելի մանկական օքսիգենատոր: Այնուհետև, գնահատող հանձնաժողովը իրականացրել է համարժեքության գնահատում, արձանագրել տեխնիկական հատկանիշների անընդունելի տարբերություններ և Օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընկերությունից պահանջվել տեխնիկական բնութագրերի շտկում: Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է գրություն, սակայն դրանով չի շտկել հանձնաժողովի ներկայացրած տեխնիկական բնութագրերի տարբերությունները, ինչպես նաև չի հիմնավորել առաջարկած ապրանքի համարժեքությունը հրավերի պահանջներին: Արդյունքում Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.01.2021թ.-ի թիվ 26/26/967-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

04.02.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/21 ընթացակարգի վերաբերյալ հայանում ենք, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաեւ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև՝ Ընկերություն): Ընկերությունն Ընթացակարգին ի թիվս այլի մասնակցել է նաև 8-րդ չափաբաժնով, որով պահանջվում է ԱԱՇ օքսիգենատոր մանկական: Ընթացակարգին մասնակցել է համարժեք ապրանքատեսակով:

Ընթացակարգի տեխնիկական բնութագրով Պատվիրատուն պահանջել է ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Եվրոսեթ, Trilly AF AG5232, մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Գնահատող հանձնաժողովը 14 հունվարի 2021թ թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում, հանձնաժողովն արձանագրեց, որ բոլոր ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ 8-րդ «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի: Նշված չափաբաժնով BBP241 օքսիգենատորը ունի 2լ/րոպե արյան թողունակության ցուցանիշ, ինչպես նաև նախատեսված է մինչեւ 18կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար: Սակայն Հրավերով նախատեսված մանկական օքսիգենատորը ունի 3.5լ/ըոպե արյան թողունակություն եւ նախատեսված է մինչեւ 35կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել եւ առաջարկի շտկման նպատակով մասնակցին տրամադրել Օրենսդրությամբ սահմանված ժամկետ: Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստն անցկացնել 15.01.2021թ ժամը 14:30-ին:

15.01.2021թ Ընկերությունը 14.01.2021թ արձանագրությամբ հայտնած տեսակետի վերաբերյալ գրությամբ հայտնել է, որ ընթացակարգի 8-րդ չափաբաժնով մասնակցել է համարժեք ապրանքով, իսկ 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով պատվիրատուն պահանջում է մանկական օսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով, այսինքն, հրավերի տեխնիկական բնութագրով այլ պայման ներկայացված չի եղել:

15.01.2021թ ժամը 14:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրության 1-ին կետով որոշել է Ընդունել ի գիտություն, որ սահմանված մեկ օրյա ժամկետում «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է գրություն, սակայն չի ներկայացրել եւ չի շտկել իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական հատկանիշներն այն չափանիշներով, որոնք ներկայացվել էին գնահատող հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:»

5-րդ կետի համաձայն՝ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաեւ առաջարկվող ապրանքի անվանումը, արտադրողը եւ/կամ ապրանքային նշանը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրերը ներառվում են կնքվող պայմանագրերում:

Հանձնաժողովը գտնում է նաեւ, որ համարժեք ապրանք առաջարկելու դեպքում այդ առաջարկի գնահատումը իրականացվում է գնահատող հանձնաժողովի կողմից, մինչեւ հաղթողի ընտրությունը:

Փաստացի ընկերությունը սահմանված ժամկետում ամբողջական տեխնիկական ցուցանիշներ չներկայացնելով չի հերքել գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված տեխնիկական հատկանիշների տարբերությունը եւ չի հիմնավորել առաջարկած ապրանքի համարժեքությունը հրավերով նախատեսվածին:

Հանձնաժողովը որոշեց մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերության հայտը՝ 8-րդ չափաբաժնով առաջարկված ապրանքը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմքով:

2-րդ կետով հանձնաժողովը որոշել է, հաշվի առնելով այն, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել եւ բավարար գնահատված բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հրավիրել բանակցությունների

գնային առաջարկի նվազեցման շուրջ, որը տեղի կունենա 20.01.2021թ ժամը 14:00-ին: Բանակցությունների վարման կարգը եւ ժամկետները կսահմանվեն նիստին:

Այսպիսով, Պատվիրատուն պահանջել է մանկական օքսիգենաար գործարանային կոմպլեկտավորումով, նշելով ֆիրմային անվանում եւ մոդել, որը ողջամտորեն հիմք է տալիս եզրակացնելու, որ անհնար է եղել տեխնիկակակն բնութագրի նկարագրումն առանց դրա: Ընկերությունը նշված ընթացակարգին մասնակցել է համարժեք ապրանքով, որի մասին նշված է եղել: Այնուհետեւ, գնահատող հանձնաժողովը 3-րդ արձանագրությամբ պահանջել է կատարել շտկում համապատասխանեցնելով հրավերի տեխնիկական բնութագրին: Տեխնիկական բնութագրով պահանջվել է մանկական օքսիգենաար գործարանային կոմպլեկտավորումով, այլ որեւէ չափորոշիչ նշված չի եղել: Գնահատող հանձնաժողովը, ինչ է նկատի ունեցել հայտնի չէ եւ արդյոք գնահատող հանձնաժողովը իրավասու էր տեխնիկակն բնութագրից դուրս այլ պահանջ ներկայացնել մասնակցին:

Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով պատվիրատուն ներկայացրել է հետեւյալ տեխնիկական բնութագիրը, պահանջվում է ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Եվրոսեթ, Trilly AF AG5232, մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Մասնակիցը ներկայացրել է համարժեք ապրանք ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, Medtronic BBP241 մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

Հրավերի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է, որ պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել մանկական օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորումով, այլ չփորոշիչներ առկա չեն:

Պատվիրատուն 15.01.2021թ թիվ 4-րդ արձանագրությամբ իրավացիորեն հղում է արել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, այն որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ եւ հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Ինչպես նաեւ հղում անելով նույն հոդվածի 5-րդ մասին, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անկանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Արդյոք 8-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքը չէր կարող ներկայացվել այնպես, որ հղում չարվեր ֆիրմային անվանմանը, մոդելին, որպեսզի հետագայում փարակերպ մեկնաբանության տեղիք չտար:

Գտնում ենք, որ առանց ֆիրմային անվանման հնարավոր էր ներկայացնել տեխնիկական բնութագիր, որ անհրաժեշտ է մանկական օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորումով:

Պատվիրատուն տեխնիկական բնութագրով առանց անհրաժեշտության նշել է ֆիրմային անվանում եւ այդ անվանումով առաջնորդվելով է գնահատում այլ ապրանքների համարժեքությունը: Նման պարագայում համարժեք ապրանաքտեսակով հայտ ներկայացնելն իմաստազրկվում է, քանի որ, պատվիրատուն ուղեցույց է դիտարկելու բացառապես այդ ֆիրմայի արտադրանքը եւ ոչ թե այնպիսի չափորոշիչներով ապրանք, որոնք համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, չառաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով:

Օրենքը եւ ՀՀ կառակարության 04.05.2017թ N 526-Ն որոշումը (հետայսու նաեւ Կարգ) չի նախատեսում այնպիսի իրավական կարգավորում, որ գնահատող հանձնաժողովը գնահատման ընթացքում արձանագրությամբ այլ նախապայմաններ, ապրանքի չափորոշիչներ առաջ բերի, որոնք սահմանված չեն եղել հրավերի տեխնիկական բնութագրով:

Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը 14.01.2021թ թիվ 3-րդ արձանագրությամբ մասնակցին հավելյալ չափորոշիչների վերաբերյալ պարզաբանում է պահանջել, որոնք չեն եղել 8-րդ չափաբաժնով տեխնիկական բնութագրում: Այդ կերպ պատվիրատուն արհեստածին «հիմքեր» է ստեղծել մասնակցի հայտը մերժելու, այնուհետեւ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի նախապայմաններ առաջա բերելու համար:

Եթե Պատվիրատուն համարժեք ապրանքատեսակները դիտարկում է համեմատության մեջ տեխնիկական բնութագրով նշված ֆիրմային անվանման ապրանքի հետ եւ նախապատվությունը տալիս իր կողմից նշված ապրանքանիշին, ապա օրենսդրի կողմից սահմանված համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը դառնում է իմաստազուրկ, իսկ պատվիրատուի գործողությունները քողարկված նախապես ձեռք

բերված համաձայնություն է, նշված ֆիրմային անվանմամբ ապրանք մատակարարողի հետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակիցն ընդգրկվում է, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընթացակարգով, մասնակիցն ի սկզբանե հայտնել եւ ստանձնել է մասնակցել համարժեք ապրանքով, ուստի մասնակցի հետագա մասնակցության դադարեցումն այն պատճառաբանությամբ, թե ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, ողջամիտ եւ հիմնավորված չէ, քանի որ վերը բազմիցս ներկայացվեց, որ տեխնիկական բնութագրով պահանջվել է մանկական օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորմամբ, իսկ եթե Պատվիրատուն նկատի է ունեցել, որ մասնակցի ներկայացրած ապրանքանիշի անվանումը պետք է փներ նույնը, այն ինչ նշված է տեխնիկական բնութագրում՝ Եվրոսեթ, Trilly AF AG5232, ապա ինչու է այս դեպքում օրենսդիրը սահմանել համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը: Պատվիրատուի տրամաբանությամբ այն մասնակիցներն ովքեր հայտ կներկայացնեն համարժեք ապրանքնով, ապա կընդգրկվեն գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ֆինանսների նախարարության 26.01.2021թ.-ի թիվ 26/26/967-2021 գրության հիման վրա նախաձեռնած ընթացակարգը:

Մասնակիցը, 24.02.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման լրացմամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության 26.01.2021թ 26/26/967-2021 գրության հիման վրա «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով հարուցված ՍՑ-ԼՕ-2021/21 ընթացակարգի վերաբերյալ հավելում ենք հետեւյալը.

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով 20.01.2021թ բողոք էր ներկայցվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը քննվել է ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ծածկագրի ներքո:

Բողոքի քննության արդյունքում 18.01.2021թ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 որոշմամբ թեեւ բողոքը մերժվել է, սակայն բողոք քննող անձն արձանագրել է, որ «Պատվիրատու «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջները, քանի որ պատվիրատուն չի բնութագրել ձեռք բերվող ապրանքի ԱԱՇ օքսիգենատոր մանկական, հատկանիշները այլ միայն սահմանափակվել է հղում կատարելով արտադրողին եւ ապրանքի մոդելին, հնարավորություն չտալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել ձեռբերվող գնման առարկան միաժամանակ տալով տարակերպ մեկնաբանության տեղիք:»

Միեւնույն ժամանակ, ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 բողոքի քննության շրջանակում բողոքը քննող անձի կողմից հարցադրում է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքի համարժեքության վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ԱՆ առողջապահական ծրագրեր իրականացնող գրասենյակի բժշկական սարքավորումների մասնագետ Արթուր Գեւորգյանը հայտնել է հետեւյալը.

«Ուսումնասիրելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հրավերի 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող ապրանքի ԱԱՇ օքսիգենատոր մանկական, տեխնիկական նկարագրությունը չի ներառում տեղեկատվություն օքսիգենատորի տեխնիկական տվյալների վերաբերյալ (արտադրանքի յուրահատկություններ, չափսեր, միացուցիչների տեսակներ եւ չափսեր, արտադրողի կողմից օգտագործվող նյութեր եւ այլն): «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նույնպես բացակայում է նմանատիպ տեղեկատվությունը, որն օրինաչափ է մրցույթի տեխեիկական բնութագրում տվյալ տեղեկատվության բացակայության պարագայում:...»:

Այսպիսով, Ձեր վարույթում քննվող ՍՅ-ԼՕ-2021/21 ընթացակարգով «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի բացակայությունը հիմնավորվում նաեւ 18.02.2021թ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 որոշմամբ, ուստի խնդրում ենք մերժել հարուցված ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, 8-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Մեգիէլ» ՍՊԸ-ն:

iii. «Մեգիէլ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի հավելված 1-ի (այսուհետ նաև՝ Հավելված 1)՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 8-րդ չաւիաբաժնով սահմանվել է հետևյալ ապրանքը.

ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	Եվրոսեթ, Trilly AF AG5232	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով:

v. Հավելված 1-ով սահմանվել է նաև, որ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:

vi. «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 8-րդ չափաբաժանի մասով առաջարկել է հետևյալ ապրանքը.

ՄԱՇ Օքսիգենատոր մանկական	Medtronic	Մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորումով: համարժեք Medtronic BBP241

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 14.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես՝ նշված չափաբաժնով ներկայացված Medtronic BBP241 օքսիգենատորը ունի 2լ/րոպե արյան թողունակության ցուցանիշ, ինչպես նաև նախատեսված է մինչև 18 կգ

քաշ ունեցող երեխաների վիրահատության համար: Սակայն, Հրավերով նախատեսված մանկական օքսիգենատորը ունի 3.5լ/րոպե արյան թողունակություն և նախատեսված է մինչև 35 կգ քաշ ունեցող երեխաների վիրահատության համար:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ շտկման նպատակով մասնակցին տրամադրելով Օրենսդրությամբ սահմանված ժամկետ:

ix. «Մեգիէլ» ՍՊԸ-ն 15.01.2021թ.-ին Հանձնաժողովին ուղղված գրությամբ, ի պատասխան 14.01.2021թ.-ի թիվ 3 արձանագրության, հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով տեխնիկական բնութագրի 8-րդ չափաբաժնով պահանջվել է Եվրոսեթ, Trilly AF AG5232 արտադրողի ու ապրանքային նշանի ԱԱՇ մանկական օքսիգենատոր գնման առարկա, իսկ իրենց կողմից առաջարկվել է Medtronic BBP241 արտադրողի ու ապրանքային նշանի ԱԱՇ մանկական օքսիգենատոր ապրանքատեսակը, որը համարժեք է հրավերով պահանջվող ապրանքի բնութագրին:

x. Հանձնաժողովի 15.01.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը գտել է, որ համարժեք ապրանք առաջարկելու դեպքում այդ առաջարկի գնահատումն իրականացվում է գնահատող հանձնաժողովի կողմից, մինչև հաղթողի ընտրությունը: Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ամբողջական տեխնիկական ցուցանիշներ չներկայացնելով չի հերքել գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված տեխնիկական հատկանիշների տարբերությունը և չի հիմնավորել առաջարկած ապրանքի համարժեքությունը հրավերով նախատեսվածին:

xi. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով՝ առաջարկված ապրանքը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմքով:

xii. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.02.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանն ուղղված Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջները, քանի որ Պատվիրատուն չի բնութագրել ձեռքբերվող ապրանքի՝ ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, հատկանիշները, այլ միայն սահմանափակվել է հղում կատարելով արտադրողին և ապրանքի մոդելին՝ հնարավորություն չտալով

մասնակիցներին ճշգրիտ ընկալել ձեռքբերվող գնման առարկան՝ միաժամանակ տալով տարակերպ մեկնաբանության տեղիք:

xiii. Նույն որոշմամբ՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև Ընկերության կողմից հայտի թիվ 1.1 հավելվածով՝ ապրանքի ամբողջական նկարագրով, ապրանքի հատկանիշների բնութագրման բացակայության պայմաններում՝ նշված լինելով միայն արտադրողը և մոդելը, հնարավոր չէ գնահատել ապրանքների համարժեքությունը և դրանով պայմանավորված՝ հայտի մերժման իրավաչափությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.01.2021թ.-ի թիվ 26/26/967-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ

իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

Նույն կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է…:

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 8.8-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն

սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.02.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ծածկագրով կայացված որոշմամբ

Բողոքներ քննող անձն արձանագրել է, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանն ուղղված Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջները, քանի որ Պատվիրատուն չի բնութագրել ձեռքբերվող ապրանքի՝ ԱԱՇ Օքսիգենատոր մանկական, հատկանիշները, այլ միայն սահմանափակվել է հղում կատարելով արտադրողին և ապրանքի մոդելին՝ հնարավորություն չտալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել ձեռքբերվող գնման առարկան՝ միաժամանակ տալով տարակերպ մեկնաբանության տեղիք:

Նույն որոշմամբ՝ արձանագրվել է նաև, որ Ընթացակարգի հրավերով, ինչպես նաև Ընկերության կողմից հայտի 1.1 հավելվածով՝ ապրանքի ամբողջական նկարագրով, ապրանքի հատկանիշների բնութագրման բացակայության պայմաններում՝ նշված լինելով միայն արտադրողը և մոդելը, հնարավոր չէ գնահատել ապրանքների համարժեքությունը և դրանով պայմանավորված՝ հայտի մերժման իրավաչափությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.02.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/01 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի 14.01.2021թ.-ին և 15.01.2021թ.-ին հրավիրված նիստերը և դրանց արդյունքում կազմված համապատասխանաբար՝ թիվ 3 և թիվ 4 արձանագրություններով՝ «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, Ընթացակարգի 8-րդ չափաբաժանի մասով առաջարկած ապրանքի գնահատման և վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասերով, ընդունված որոշումներն իրավաչափ չեն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների

կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված («Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/32» ծածկագրով բաց մրցույթի 8-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջների խախտմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.01.2021թ.-ի թիվ 26/26/967-2021 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/21 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**